ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՀԲՄԾՁԲ-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 14 . 04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից, և «Լիվասա» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «Վանգաս» ՍՊԸ-ի հետ)՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Պետրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 15.05.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

Պայմանագրի գնման ժամանակացույցում ՊՆ 32277 զորամասում կատարվող լվացքի հավաքման ծառայությունից 26595,55 կգ քանակը կրճատվում է և ավելացվում ՊՆ 31549 զորամասում կատարվող լվացքի հավաքման ծառայության քանակին:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 16070400 (տասնվեց միլիոն յոթանասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուի մատուցած Ծառայությունների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2020թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիրն ուժի մեջ է կնքման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի/պայմանագրի/ պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունի մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Լիվասա» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ. 142 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2479000189010000 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02236972 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ |

*Հավելված N 1*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջոցառման և գնման ենթակա ծառայությունների անվանումները | Տեղակայման վայրը: Զորամաս | Տեղակայման վայրը: Վայր | Չ/մ | Քանակ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Գնման ժամանակացույց 2020թ ըստ ամիսների: հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | լվացքի հավաքման ծառայություններ | Երևանի կայազոր-2, այդ թվում | | դրամ | 1 | | | | | | | | | | | | | | |
| | | 59559/14018 | Երևան | կգ | 16,368 | 160 | 2618880 | 1562 | 1562 | 1562 | 1298 | 1298 | 1298 | 1144 | 1144 | 1144 | 1232 | 1562 | 1562 |
| | | 55076 | Լուսակերտ | կգ | 37,944 | 160 | 6071040 | 3621 | 3621 | 3621 | 3009 | 3009 | 3009 | 2652 | 2652 | 2652 | 2856 | 3621 | 3621 |
| | | 14746 | Երևան | կգ | 10,416 | 160 | 1666560 | 994 | 994 | 994 | 826 | 826 | 826 | 728 | 728 | 728 | 784 | 994 | 994 |
| | | 50552 | Երևան | կգ | 14,880 | 160 | 2380800 | 1420 | 1420 | 1420 | 1180 | 1180 | 1180 | 1040 | 1040 | 1040 | 1120 | 1420 | 1420 |
| | | 31549 | Երևան | կգ | 16,368 | 160 | 2618880 | 1562 | 1562 | 1562 | 1298 | 1298 | 1298 | 1144 | 1144 | 1144 | 1232 | 1562 | 1562 |
| | | 10724/29632 | Երևան | կգ | 2,232 | 160 | 357120 | 213 | 213 | 213 | 177 | 177 | 177 | 156 | 156 | 156 | 168 | 213 | 213 |
| | | 10724/20440 | Երևան | կգ | 2,232 | 160 | 357120 | 213 | 213 | 213 | 177 | 177 | 177 | 156 | 156 | 156 | 168 | 213 | 213 |
| | Ընդհանուր | | | կգ | 100440 | | 16070400 | 9585 | 9585 | 9585 | 7965 | 7965 | 7965 | 7020 | 7020 | 7020 | 7560 | 9585 | 9585 |

Համաձայնագրի/պայմանագրի/ պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«[illegible]» ՍՊԸ տնօրեն

ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Հավելված N 2*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր, ոչ ուշ քան 25.12.2020թ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | լվացքի հավաքման ծառայություններ | 98311100/2 | 5875200 | 7149600 | 8424000 | 9547200 | 10670400 | 11793600 | 13003200 | 14536800 | 16070400 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էլիկամ» ՍՊԸ տնօրեն

ՊԵՏՐՈՍՅԱՆ